Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1233-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված ժամանակացույցի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

4.	1) ՀՀ համայնքներ, որոնց 2016 թվականի բյուջեի համաձայն բյուջետային ծախսերը գերազանցել են 100 մլն դրամը և որոնց 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ վերապահված են մեկից ավելի համայնքային առևտրային կազմակերպության, համայնքային ոչ առևտրային կազմակերպության, համայնքային հիմնարկի կառավարման լիազորություններ	01.01.2017 թ.
	2) ՀՀ համայնքներ, որոնք 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ չեն բավարարել սույն կետի «ա» ենթակետի պահանջները (բացառությամբ այն համայնքների, որոնք արդեն ներդրել են ներքին աուդիտի համակարգ)	01.01.2018 թ.

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: